ՎԱՆԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԶԱՔԱՐՅԱՆ

(Ծննդյան 85-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ականավոր գիտնական ու կազմակերպիչ, ՀԱՊՀ պատվավոր պրոֆեսոր Վանիկ Սուրենի Զաքարյանի 85-ամյակը:

Վանիկ Զաքարյանը ծնվել է 1936 թ. մարտի 21-ին Մեղրի քաղաքում: Նույն թվականին ընտանիքը տեղափոխվել է Երևան: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի թիվ 40 դպրոցում՝ ավարտելով ոսկե մեդալով, իսկ 1959 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը՝ գերազանցության դիպլոմով:

Լինելով ակադեմիկոս Մ.Մ. Զրբաշյանի աշակերտը, այնուհետև գործընկերը՝ կատարել է բազմաթիվ ուսումնասիրություններ և ստացել հիմնարար արդյունքներ մերոմորֆ ֆունկցիաների եզրային հատկությունների վերաբերյալ: Այդ ուսումնասիրություններն իրենց ամփոփումն են գտել 1976 թ. պաշտպանած դոկտորական ատենախոսությունում, որն արժանացել է մասնագետների բարձր գնահատականին: Չնվազող եռանդով շարունակել է իր գիտական հետազոտությունները, որոնք ամփոփվել են «Классы и граничные свойства мероморфных в единичном круге функций», М., «Наука», 1993, մենագրությունում և ավելի քան 150 գիտական և գիտամեթոդական աշխատանքներում:

Հանրապետության գիտական հասարակությունը, բարձր գնահատելով Վ.Ս. Զաքարյանի գործունեությունը, 1990 թ. նրան ընտրել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996-ին՝ ակադեմիկոս:

Վանիկ Զաքարյանն իր գործունեության առաջին իսկ օրերից մեծ եռանդ և ջանք է ներդրել Հայաստանում երիտասարդ մաթեմատիկոսների աճի և դաստիարակության գործում: Երկար տարիներ ղեկավարել է Երևանի պետական համալսարանում գործող 050 մասնագիտական խորհուրդը: Նրա անմիջական ջանքերով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում (ՀՊՃՀ, այժմ՝ ՀԱՊՀ) ստեղծվել է 053 մասնագիտական խորհուրդը:

Աշխատելով Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում որպես ամբիոնի վարիչ, պրոռեկտոր, իսկ 1977 թվականից՝ ՀՊՃՀ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, այնուհետև՝ մաթեմատիկայի դեպարտամենտի վարիչ, ֆակուլտետի դեկան, իր համակողմանի բանիմացությամբ ամենուրեք կարողացել է ստեղծել համերաշխ և ստեղծագործ աշխատանքային կոլեկտիվներ:

Ակադեմիկոս Զաքարյանը երկար տարիներ ղեկավարել է կրթության և գիտության նախարարության գիտամեթոդական խորհուրդը: Նրա լայն գիտական էրուդիցիան հնարավորություն է տվել բարձր մակարդակով ղեկավարել երկու գիտական պարբերականներ՝ «ՀՀ ԳԱԱ Զեկույցները» և իր կողմից հիմնադրված «Մաթեմատիկան բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսը:

Վանիկ Զաքարյանի կազմակերպչական գործունեությունը դուրս է եկել հանրապետության սահմաններից. 1996թ. ընտրվել է Համաշխարհային շախմատային ֆեդերացիայի փոխնախագահ: 1996թ. նրա ջանքերի շնորհիվ Հայաստանում անցկացվեց Համաշխարհային շախմատային օլիմպիադան: ՖԻԴԵ-ի կողմից նրան տրվել է միջազգային կազմակերպչի թիվ 1 դիպլոմը:

Վանիկ Զաքարյանի գործունեությունն արժանացել է բարձր գնահատականի Հայաստանի կառավարության կողմից: Դրա վկայությունն են «Անանիա Շիրակացի», «Մովսես Խորենացի» մեդալները և «ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ» պատվավոր կոչումը:

Այսօր ակադեմիկոս Զաքարյանն ու իր տիկինը հայկական մեծ ընտանիքի ծնողներն են, որոնց զավակները ևս առանձնանում են իրենց ձեռքբերումներով, իսկ տարբեր աշխարհամասերում ապրող նրանց երկու թոռները կրում են ակադեմիկոս պապի անունը:

ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագրի տեխնիկական գիտությունների սերիայի խմբագրական խորհուրդը սիրով շնորհավորում է ակադեմիկոս Վանիկ Զաքարյանին ծննդյան 85-ամյակի կապակցությամբ, մաղթում քաջ առողջություն: